



ԱԿԲ
կրթական հիմնադրամ



Արարատյան
բակալավրիատ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների
մասնագիտական զարգացման և
հավաստագրման ծրագրի դիմորդների
ընդունելության դիմում-հայտի լրացման

Նախաբան

Ուղեցույցի նպատակն է Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի (ԱԲ-ի ՈւՄՀՀ) դիմորդների ընդունելության դիմում-հայտի լրացմանն օժանդակելը:

Դիմում-հայտի լրացումը Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցների ընտրության *դիմումի փուլի* առաջին քայլն է, որին հաջորդում է *առարկայական թեստավորումը*: Առարկայական թեստավորումը կազմակերպվում և անցկացվում է Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի կողմից: Վերջինս ԱԲ-ի ՈւՄՀՀ բաժնին տրամադրում է *թեստավորման փուլը հաղթահարած* դիմորդների ցանկը: Առարկայական թեստավորման փուլը հաղթահարած բոլոր դիմորդները հրավիրվում են մասնակցելու *հարցազրույցի փուլին*:

Դիմում-հայտերը լրացվում են առցանց՝ հետևյալ [հղումով](#) գրանցումից հետո: *Գրանցումից* հետո դիմում-հայտը մասամբ լրացնելու ընթացքում հնարավորություն է տրվում *պահպանելու մասամբ լրացված դիմումը*, ապա շարունակելու դրա վրա աշխատանքը:

Մինչև առարկայական թեստավորման մեկնարկը դիմում-հայտում նշված էլփոստին յուրաքանչյուր դիմորդ կստանա իր լրացրած դիմում-հայտը՝ PDF տարբերակով, որն անհրաժեշտ է *տպված և ստորագրված* ներկայացնել առարկայական թեստավորման օրը թեստավորման անցկացման համապատասխան վայրում: Առանց տպագիր դիմումի էլեկտրոնային դիմումն անվավեր է:

Դիմում-հայտը լրացվում է *հայատան՝ Unicode տառատեսակով*: Տեքստում պետք չէ օգտագործել չակերտներ:

Դիմում-հայտի փուլում նախատեսվում է Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի դիմորդների մասին տեղեկույթի հավաքում, որը կհավաստի դիմորդի տվյալների համապատասխանությունը ծրագրի հաջորդ փուլին՝ առարկայական թեստավորմանը մասնակցելու համար:

Դիմում-հայտի միջոցով դիմորդների վերաբերյալ տեղեկույթը հավաքվում է ըստ դիմում-հայտում նշված հետևյալ հիմնական բաժինների՝

- անձնական և կոնտակտային տվյալներ,
- աշխատանքային փորձառություն,
- կրթություն,
- հմտություններ,
- էսսեներ,
- և այլն:

Դիմորդը պատասխանատվություն է կրում դիմում-հայտում ներկայացված ցանկացած տեղեկության ճշմարտացիության ու ճշգրտության համար: Եթե որևէ փուլի ընթացքում պարզվի, որ դիմում-հայտում ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանել իրականությանը, ապա դիմորդը կարող է որակագրվել և դուրս մնալ ծրագրից:

Ինչպես գրանցվել համակարգում

Նախքան բուն դիմում-հայտը լրացնելն անհրաժեշտ է [գրանցվել](#) համակարգում ստեղծելով անձնական էջ, որը հնարավորություն կտա ընթացքում պահպանելու մասամբ լրացված տեղեկույթն ու այնուհետև շարունակելու դրա լրացումը:

Առաջին անգամ գրանցվելու դեպքում անհրաժեշտ է լրացնել «**Նոր օգտատեր**» ձևի դաշտերը:

Դաշտերն անհրաժեշտ է լրացնել **ԼՍՏԻՆԱՏԱՌ**:

Դաշտերը	Մեկնաբանություն
1. Մուտքանուն	Լրացնել դիմորդի անուն-ազգանունը՝ իրար կպած, օր.՝ PetrosPetrosyan: Մուտքանունը պետք է պարունակի 5-24 նիշ:
2. Գաղտնաբառ	Գաղտնաբառը պետք է լինի տառերի և թվերի համակցություն, որը հեշտ կլինի մտաբերել, օր.՝ Petros17: Գաղտնաբառը ևս պետք է լինի լատինատառ և պարունակի 7-24 նիշ:
3. Հաստատել գաղտնաբառը	Կրկնել վերևում լրացված գաղտնաբառը:
4. Էլփոստ	Լրացնել այն էլ. հասցեն, որն ակտիվ օգտագործում եք:

Տե՛ս օրինակը ստորև.

Նոր օգտատեր

Մուտքանուն ← **1**

Գաղտնաբառ ← **2**

Կրկնել գաղտնաբառը ← **3**

Էլփոստի հասցե ← **4**

Ավարտել ←

Հին օգտատեր

Մուտքանուն

Գաղտնաբառ

Ավարտել

[Մոռացել եմ գաղտնաբառը](#)

Տվյալները լրացնելուց և «Ավարտել» կոճակը սեղմելուց հետո կարող եք սկսել դիմում-հայտի լրացումը:

Եթե դուրս եք գալիս համակարգից և փորձում կրկին մուտք գործել, ապա պետք է լրացնել «**Հին օգտատեր**» ձևի դաշտերը՝ մուտքագրելով այն մուտքանունն ու գաղտնաբառը, որոնք նշել եք համակարգում գրանցվելիս:

Տե՛ս օրինակը ստորև.

Նոր օգտատեր	Հին օգտատեր
Մուտքանուն <input type="text"/>	Մուտքանուն ← 1 <input type="text" value="Petrospetrosyan"/>
Գաղտնաբառ <input type="text"/>	Գաղտնաբառ ← 2 <input type="text" value="*****"/>
Կրկնել գաղտնաբառը <input type="text"/>	<input type="text"/>
Էլփոստի հասցե <input type="text"/>	<input type="text"/>
<input type="button" value="Ավարտել"/>	<input type="button" value="Ավարտել"/> ← Մոռացե՛ր գաղտնաբառը

«Հին օգտատեր» ձևում Ձեր տվյալների լրացումից հետո կհայտնվի հետևյալ պատուհանը.

Սեղմեք «Լրացնել հայտը» կոճակը և շարունակեք լրացնել հայտը:

	Դիմումի կոդ	Updated	Դասավանդվող առարկա	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)	Սեռ	Ծննդավայր (Երկիր)	Ծննդավայր
Լրացնել հայտը	1979279	2017-12-07 05:56:07								

Ինչ անել, եթե մոռացել եք գաղտնաբառը


Եթե չեք հիշում գաղտնաբառը, ապա սեղմեք «Մոռացե՛ր գաղտնաբառը» հղումը: Այս դեպքում կհայտնվի հավելյալ դաշտ, որտեղ պետք է լրացնել այն Էլ. հասցեն, որը նշել էիք գրանցվելիս: Այս գործողությունները կատարելուց հետո Ձեր Էլ. հասցեին կգա նամակ Formsit կայքի հասցեից. նամակում նկարագրված կլինի, թե ինչպես կարող եք վերականգնել գաղտնաբառը:

Նոր օգտատեր	Հին օգտատեր
Մուտքանուն <input type="text"/>	Մուտքանուն <input type="text" value="Petrospetrosyan"/>
Գաղտնաբառ <input type="text"/>	Գաղտնաբառ <input type="text"/>
Կրկնել գաղտնաբառը <input type="text"/>	<input type="text"/>
Էլփոստի հասցե <input type="text"/>	<input type="text"/>
<input type="button" value="Ավարտել"/>	<input type="button" value="Ավարտել"/> Մոռացե՛ր գաղտնաբառը ← <input type="button" value="Ավարտել"/>

Ինչպես պահպանել մասամբ լրացված դիմում-հայտը

Դուք հնարավորություն ունեք պահպանելու մասամբ լրացված դիմում-հայտը: Անհրաժեշտ քայլերն են՝

1. գրանցվել համակարգում և ստեղծել անհատական Էջ (տե՛ս «Ինչպես գրանցվել համակարգում» բաժինը).
2. դիմում-հայտը մասամբ լրացնելուց հետո սեղմել դիմում-հայտի վերջում գտնվող «Պահպանել մասամբ լրացված դիմում-հայտը» կոճակը (տե՛ս ստորև):



Խորհուրդ ենք տալիս յուրաքանչյուր փոփոխությունից հետո սեղմել վերոնշյալ կոճակը՝ տվյալների կորստից խուսափելու համար:

Ինչպես լրացնել դիմում-հայտը

Դիմում-հայտը բաղկացած է ինչպես ընտրովի պատասխանով, այնպես էլ բաց (ազատ շարադրանքով պատասխան պահանջող, էսսեներ) հարցերից: Էսսեները գրելիս պետք է լինել հնարավորինս հստակ՝ հնարավորության դեպքում բերելով օրինակներ:

Դիմում-հայտում ***-ով նշված** են լրացման համար պարտադիր հարցերը:

Խնդրում ենք դիմում-հայտը լրացնելիս չակերտներ չկիրառել:

Ինչպես ավարտել դիմում-հայտի լրացումը

Դիմում-հայտի բոլոր բաժինները լրացնելուց և ներկայացված ամբողջ տեղեկույթը ևս մեկ անգամ վերանայելուց հետո անհրաժեշտ է սեղմել հայտի վերջում գտնվող «Ավարտել» կոճակը:

Եթե դիմում-հայտն ամբողջովին ճիշտ է լրացված, ապա «Ավարտել» կոճակի սեղմումից հետո Էկրանին կհայտնվի հետևյալ հաղորդագրությունը՝ «ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ: ՁԵՐ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է»: Սխալ ձևաչափով լրացված պատասխանների դեպքում հայտի ամենավերևում կհայտնվի հետևյալ հաղորդագրությունը՝ «**Խնդրում ենք վերանայել դիմում-հայտը և ուղղել նշված դաշտերը**», և սխալ լրացված դաշտերը կկարմրեն: Խնդրում ենք այդ դեպքում վերանայել բոլոր կարմիր դաշտերը, կատարել հուշումներին համապատասխան ուղղումներ, որպեսզի կարողանաք ուղարկել դիմում-հայտը՝ Նորից սեղմելով «Ավարտել» կոճակը:

Ինչպես հանձնել տպագիր դիմում-հայտը

Դիմում-հայտն ավարտելուց հետո նույն դիմումը PDF տարբերակով կստանաք Ձեր նշած Էլեկտրոնային հասցեին: Այն անհրաժեշտ է տպված և ստորագրված ներկայացնել առարկայական թեստավորման օրը թեստավորման անցկացման համապատասխան վայրում:

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

Հայաստան, 0009, Երևան.
Կորյունի փող., 19ա շենք, 9-րդ հարկ
Հեռ.՝ +374 93 52 37 17
Էլփոստ՝ ab_teachers@abedu.am
www.araratbaccalaureate.am
www.ayb.am
www.aybschool.am

